**Արձանագրություն N 3**

**<< ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2022/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի**

ք. Երևան

16 դեկտեմբերի, 2021թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ — Ա. Մարտիրոսյան

Հանձնաժողովի անդամներ

/ԳՊ/ԳԱ/՝ — Ա. Առուշանյան

/ԳՊ/ԳԱ/՝ — Ռ. Խաչատրյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Լ. Ադամյան

/ԳՊ/ԲԱ/՝ — Ն. Պետրոսյան

Քարտուղար՝ /ԳՊ/Միմ/ — Վ. Ղազարյան

1. <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2022/1>> ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, 2021թ.-ի դեկտեմբերի 16-ին, ժամը 10:00-ին:

2. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| N | **Մասնակցի անվանումը** | **Տվյալները** |
|---|---|---|
| 1 | <<Յուքոմ>> ՓԲԸ | ք. Երևան, Դավիթ Անհաղթ 8/4, հեռ. 095555054 |
| 2. | <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ | ք. Երևան, Ազատության 24/1, հեռ. 010700700 |

3. Հայտերի բացման արդյունքում արձանագրվեց, որ ընթացակարգի մասնակիցների կողմից ուղարկված հայտերը Համակարգում կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան, և ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

4. Հանձնաժողովը արձանագրեց, որ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի վերաբերյալ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ստացվել:

5. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի համարը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Գնման առարկայի գնման հայտով հաստատված գինը | Մասնակցի անվանումը և առաջարկված ընդհանուր գինը * | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | <<Յուքոմ>> ՓԲԸ | | <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ | |
| | | | | | Գնի առաջարկը | | Գնի առաջարկը | |
| | | | | | առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/ | ներառյալ ԱԱՀ | առանց ԱԱՀ /ինքնարժեք +շահույթ/ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | տվյալների փոխանցման ծառայություններ 1 | դրամ | 1 | 3800000 | 3150000 | 3780000 | 20000000 | 24000000 |
| 3 | տվյալների փոխանցման ծառայություններ 2 | դրամ | 1 | 250000 | 140000 | 168000 | 20000000 | 24000000 |

(*-եթե մասնակիցը ԱԱՀ վճարող չի հանդիսանում,ապա լրացվում է միայն "Առանց ԱԱՀ" սյունակը)

6. <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2022/1>> ծածկագրով ընթացակագը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և հրավերի 7.7 կետը, հանձնաժողովը որոշեց կազմակերպել միաժամանակյա բանակցություններ ներկայացված գների նվազեցման նպատակով, որը տեղի կունենա 23.12.2021թ. ժամը 11:00-ին, Կառավարական տուն 3, 613 աշխատասենյակում:

**<<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2022/1>> ծածկագրով հայտերի բացման և գնահատման նիստի շարունակություն**

ք. Երևան

23 դեկտեմբերի, 2021թ.
ժամը՝ 11:00

7. 2021թ. դեկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին ՀՀ Կառավարական տուն 3 հասցեում, N 613 աշխատասենյակում կազմակերպվել են միաժամանակյա բանակցություններ <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2022/1>> ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված գնային առաջարկների նվազեցման նպատակով: Բանակցություններին ներկայացել են <<Յուքոմ>> ՓԲԸ -ի և <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ -ի կողմից լիազորված անձիք: Յուրաքանչյուր չափաբաժնի համար բանակցությունների տևողությունը սահմանվել է 5 րոպե:

8. Բանակցությունների արդյունքում վերջնաժամկետը լրանալու պահին 1-ին չափաբաժնի մասով ներկայացվել են նոր գնային առաջարկներ.

- <<Յուքոմ>> ՓԲԸ-ի կողմից՝ 2450000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)

- <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ- կողմից՝ 2500000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

2-րդ չափաբաժնի մասով նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

9. Ներկայացված հայտերի հիման վրա <<ՀՀ ՎԿ-ԳՀԾՁԲ-2022/1>> ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել <<Յուքոմ>> ՓԲԸ-ին 1-2 չափաբաժինների մասով, 2-րդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<Տելեկոմ Արմենիա>> ՓԲԸ -ին՝ 1-2 չափաբաժինների մասով:

10. <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

11. Ընտրված մասնակցի հետ գնման պայմանագիրը կնքվելու է անգործության ժամկետի ավարտից հետո, օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հանձնաժողովի
Նախագահ՝

ԳՊ/ԳԱՊ ------------------------------ Ա. Մարտիրոսյան

Անդամներ՝

ԳՊ/ԳԱ ------------------------------ Ա. Առուշանյան

ԳՊ/ԳԱ ------------------------------ Ռ. Խաչատրյան

ԳՊ/ԲԱ ------------------------------ Լ. Ադամյան

ԳՊ/ԲԱ ------------------------------ Ն. Պետրոսյան

Քարտուղար՝ ------------------------------ Վ. Ղազարյան
/ԳՊ/Միմ/